կառուց Սուրբ Եկեղեցին Էջմիածին 'ի բերանոյ մաքրազարդ հայրապետին Հայոց 'ի Վաղարշապատ։

## ԳԼՈՒԽ Ե.

Ամենայն ընութիւն մարդոյ բնակեալ 'ի յերեսս երկրին Հայոց որում կերպի սովորութեան, որ ունի այժմոյս պաշտել զԱստուածն իւր, նոյն գունակ կացցէ և մնասցէ 'ի վերայ հաւատոյն Աստուածպաշտութեան իւրոյ, մի՛ ոք ունիցի իշխանութիւն արգելման նոցայ ով ոք որ լցէ։

## ԳԼՈՒԽ Զ.

Ով ոք հայ, որ ուրասցի հաւատս Քրիստոնէութեան իւրոյ, որում մկրտեցեալ և դրոշմեալ լինիցի 'ի յեկեղեցիս հայաստանեայց և կոչեցեալ Քրիստոնեայ՝ մահու մեռանիցի և ստացուածք նորայ անպակաս և անթերի մնասցէ ժառանգութիւն Քրիստոնեայ մնացորդաց նորայ ըստ Օրինաց։

## ԳԼՈՒԽ Է.

Աշխարհն հայաստան չափեսցի չափով և ոչ ոք ըստ իւրաքանչիւր անձի կարող լինիցի